

## **ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՊԱՄԱՎՈՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԱԴԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ (ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԴԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ)**

### **Սլավիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի  
ամբիոնի հայցորդ*

«Հ Ազգային ժողովի բոլոր գումարումների պատգամավորների գործունեությունից ակնհայտ երևում է, որ նրանց մեծ մասը հավուր պատշաճի չի կատարում իր առաքելությունը: Այս պարագայում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի անհրաժեշտ վարքագիծն ապահովելու և իրապես ժողովրդի ներկայացուցիչ հանդես գալու սահմանադրական պարտականությունը կատարելու երաշխիքներ ստեղծելու համար հարկ է մշակել պատասխանատվության գործուն ընթացակարգեր:

«Պատասխանատվությունը» փիլիսոփայական, սոցիալական, իրավական, քաղաքական, բարոյագիտական, կրոնական, հոգեբանական ընդգրկուն հասկացություն է, որն ուսումնասիրվում է տարբեր գիտությունների կողմից՝ տարբեր տեսանկյուններից<sup>1</sup>:

Իրավաբանական գրականության մեջ կան իրավական պատասխանատվության բազմաթիվ բնորոշումներ, սակայն առավել տարածված է այն մոտեցումը, ըստ որի՝ այն պետական հարկադրանքի միջոց է, որը կիրառվում է անձի նկատմամբ կատարված իրավախախտման համար, արտահայտվում է մեղավորի պարսավանքով, նրա նկատմամբ անձնական, գույքային, կազմակերպական, հոգեբանական սահմանափակումների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմամբ:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորը նաև սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ է<sup>2</sup>: Պատասխանատվության ինստիտուտը կոչված է ապահովելու պատգամավորի կողմից հասարակության նկատմամբ անտարբեր վերաբերմունքի և իր պարտականությունները պատշաճ չկատարելու համար համարժեք պատասխան: Դրանով պայմանավորված՝ պատգամավորի իրավական պատասխանատվությունը իր պարտականությունները պատշաճ կատարելու հիմնական երաշխիքներից է<sup>3</sup>: Պատասխանատվության իրավական արդյունավետ կառուցակարգերի սահմանումն ապահովում է պատգամավորների կողմից իրենց գործառույթների պատշաճ իրականացումը:

Պատգամավորի պատասխանատվության մեխանիզմների զարգացման նախադրյալներն ստեղծվել են խորհրդային իրավական համակարգում, այնուհետև խորհրդարանի անդամների պատասխանատվության հարցը բավականին խորը զարգացում է ստացել: Խորհրդային տարիներին պատգամավորի իրական պատասխանատվությունը գործել է միայն մեկ ձևով՝ հրամայական մանդատի միջոցով, որը խստորեն սահմանափակել է պատգամավորի պատասխանատվության իրավական կարգավորման մե-

<sup>1</sup> Стен Философская энциклопедия. Том 4, Москва, 1967, էջեր 102-103:

<sup>2</sup> Стен Шон Д. Т., Конституционная ответственность. // Государство и право, 1995, №7, էջ 35:

<sup>3</sup> Стен Карасев А. Т., Ответственность депутатов представительных органов власти. // Российский юридический журнал, 2008. № 6, էջ 77:

խանիզմների շրջանակը<sup>4</sup>: Մինչդեռ հաշվետու չլինելը և ընտրողներից կախվածության բացակայությունը ընդհանրապես չեն նշանակում, որ պատգամավորը բացարձակ ազատ է կամ պատասխանատու չէ իր վարքագծի համար, քանի որ պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն հաշվետու լինելով և հետ կանչվելու հնարավորությամբ<sup>5</sup>:

Այնուամենայնիվ, հրամայական մանդատի վերացման և ազատ մանդատի ընդունման հետ միասին ի հայտ եկավ պառլամենտի անդամի գրեթե լիակատար անպատասխանատվություն: Պատճառներից մեկն այն է, որ ազատ մանդատի հայեցակարգի մասին կար չափազանցված ընկալում: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ բավարար հստակ չէին տարանջատվում «պատգամավորի մանդատ» և «պատգամավորի կարգավիճակ» հասկացությունները<sup>6</sup>: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պատգամավորի մանդատը նրա իրավական կարգավիճակի ընդամենը մեկ տարրն է, որ ցույց է տալիս պատգամավորի և ընտրողների միջև առկա հարաբերությունների բնույթը: Մինչդեռ ազատ մանդատը՝ որպես պատգամավորի կարգավիճակի առանձին տարր, չի բացառում պատգամավորի կարգավիճակի մյուս տարրերի, մասնավորապես պատգամավորի պարտականությունների և պատասխանատվության գոյությունը. ազատ մանդատը չի նշանակում, որ պատգամավորը կարող է գործել բացարձակ անկախ և չկրել որևէ պատասխանատվություն հասարակության և պետության առջև: Խնդիրն այն է, որ ազատ մանդատն ընդունվել է բարձր զարգացած ժողովրդավարություն և հատկապես խորհրդարանական մշակույթ ունեցող երկրներում, որտեղ ազատ մանդատը չի ընկալվում որպես անսահմանափակ անպատասխանատվություն:

Վերոգրյալը ևս մեկ անգամ հիմնավորում է, որ անհրաժեշտ է մշակել պատասխանատվության գործուն կառուցակարգեր՝ պատգամավորի պատշաճ վարքագիծն ապահովելու և իրապես ժողովրդի ներկայացուցիչ հանդես գալու, սահմանադրական պարտականությունը կատարելու երաշխիքներ ստեղծելու համար:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը պարտավոր է ընդգրկվել մշտական հանձնաժողովի կազմում, օրենքով սահմանված կարգով մասնակցել Ազգային ժողովի նիստերին, Ազգային ժողովի այն հանձնաժողովների, ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերին և այն հանձնաժողովների կազմակերպած լուսններին, որոնց կազմում նա ընդգրկված է: Ընդ որում, եթե պատգամավորն ընդգրկված է մեկից ավելի մշտական հանձնաժողովների կազմում, ապա այդ հանձնաժողովներից մեկի նիստի կամ կազմակերպած խորհրդարանական լուսնների անցկացման պահին մեկ այլ հանձնաժողովի նիստին կամ կազմակերպած խորհրդարանական լուսններին մասնակցելու դեպքում համարվում է, որ պատգամավորը կատարել է հանձնաժողովների նիստերին կամ խորհրդարանական լուսններին մասնակցելու իր պարտականությունը: Այս պարտականությունները պատգամավորի իրավական կարգավիճակի առանցքային տարրն են, քանզի հենց Ազգային ժողովի և վերջինիս հանձնաժողովների, ենթահանձնաժողովների, աշխատանքային

<sup>4</sup> Տե՛ս Абдукадыров К. А., Депутат Жогорку Кенеша Кыргызской Республики. Бишкек, 2009, էջ 147:

<sup>5</sup> Տե՛ս Шушкіна Н. Э., Некоторые аспекты парламентской этики: Императивный и свободный депутатский мандат. // Сибирский юридический вестник, 2005, № 4., էջ 19:

<sup>6</sup> Տե՛ս Васькова Л. Г., Соотношение свободного мандата с институтами обязанностей и ответственности депутата современного парламента (зарубежный опыт). // Российский юридический журнал, М., 2006, № 3, էջ 77:

խմբերի նիստերում, հանձնաժողովների կազմակերպած լսումներում են քննարկումներ ծավալվում և վերջնական որոշումներ կայացվում բոլոր կարևոր հարցերի վերաբերյալ, որոնց լուծմանն է ուղղված պատգամավորի ողջ գործունեությունը:

Պատգամավորի հանդիպումները բնակչության հետ, նրանց հուզող հարցերի ճշտումը, առկա խնդիրների և հանրային կարծիքի բացահայտումն իմաստ և գործնական նշանակություն կարող են ունենալ միայն այն պարագայում, եթե պատգամավորն այդ խնդիրների և հարցերի լուծման նպատակով անհրաժեշտության դեպքում հանդես գա օրենսդրական նախաձեռնություններով և մասնակցի դրանց քննարկմանն Ազգային ժողովի հանձնաժողովների, ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի և Ազգային ժողովի լիազույժար նիստերում, Ազգային ժողովի նիստերի ընթացքում, հանձնաժողովների կազմակերպած լսումների ընթացքում ելույթներ ունենա երկրում առկա սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտների խնդիրների վերաբերյալ, վիճահարույց որևէ փաստի, դեպքի կամ իրադարձության վերաբերյալ տեղեկատվություն կամ մեկնաբանություններ ստանալու նպատակով հարցեր տա կառավարությանը կամ նրա անդամներին և այլն: Այդ է պատճառը, որ ավանդաբար ընդունված է այն տեսակետը, համաձայն որի պատգամավորի գործունեության հիմնական ձևը խորհրդարանի, հանձնաժողովների ու կոմիտեների և խորհրդարանի այլ մարմինների նիստերին, ինչպես նաև խորհրդարանական լսումներին մասնակցելն է<sup>7</sup>:

Նշված պարտականությունը չկատարելու դեպքում պատգամավորի նկատմամբ կարող են կիրառվել պատասխանատվության տարբեր միջոցներ: Իրավական առումով դրանցից առավել արդյունավետ ենք համարում Սահմանադրության 67-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ պատգամավորի լիազորությունները դադարումը մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու դեպքում: Այնուամենայնիվ, անհարգելի բացակայության պատճառով պատգամավորին մանդատից զրկելու մասին սահմանադրական նշված դրույթը գործնականում չի կիրառվում: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ շուրջ երկու տասնամյակ գործող խորհրդարանի ոչ մի պատգամավոր այդ հիմքով չի զրկվել մանդատից, և դա այն դեպքում, երբ որոշ պատգամավորներ ամբողջ նստաշրջանի ընթացքում գրեթե մուտք չեն գործում Ազգային ժողով: Կարծում ենք՝ դա առավել-լապես պայմանավորված է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» և «գ» կետերում նշված պատգամավորի բացակայությունը հարգելի համարելու հիմքերի նախատեսմամբ: Նշված հոդվածի համաձայն, քվեարկությունից պատգամավորի բացակայությունը համարվում է հարգելի, եթե ...

բ) բացակայելուց առաջ կամ քվեարկությունից հետո՝ չորսօրյա ժամկետում, իր բացակայության պատճառի մասին նա պաշտոնապես տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, և այն վերջինիս կողմից համարվում է հարգելի:

գ) հերթական նստաշրջանի ավարտից հետո՝ 15-օրյա ժամկետում, իր բացակայության պատճառի մասին նա պաշտոնապես տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, և այն վերջինիս կողմից համարվում է հարգելի:

Այս դրույթները կարող են մեծ սուբյեկտիվիզմի տեղիք տալ, քանի որ պատգամավորի բացակայությունները հարգելի համարելը թողնվել է Ազգային ժողովի նախագահի միանձնյա հայեցողությանը: Կարծում ենք՝ պատգամավորի մեկ հերթական նստաշրջա-

<sup>7</sup> Стів Васильев В. И., Павлушкин В. И., Постников А. Е., Законодательные органы субъектов Российской Федерации. Правовые вопросы формирования, компетенции и организации работы, Москва, 2001, էջ 248:

նի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից բացակայելն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 3-րդ մասի «ա», «ա1», «ա2», «դ», «ե» կետերով չնախատեսված դեպքերում հարգելի կամ ոչ հարգելի համարելու իրավունքը նպատակահարմար է վերապահել Ազգային ժողովին, իսկ էթիկայի հանձնաժողովին իրավունք վերապահել քննարկելու և եզրակացություն ներկայացնելու Ազգային ժողովին «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 3-րդ մասի «ա», «ա1», «ա2», «դ», «ե» կետերով չնախատեսված դեպքերում պատգամավորի՝ քվեարկությունների կեսից ավելի բացակայություններն անհարգելի համարելու վերաբերյալ:

Մասնավորապես առաջարկում ենք հետևյալ իրավակարգավորումները.

- 1) «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա.1.» կետով. «ա.1) Ազգային ժողովին եզրակացություն է ներկայացնում սույն օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի «ա»-«ե» կետերով չնախատեսված հիմքերով պատգամավորի բացակայություններն անհարգելի համարելու մասին»,
- 2) ուժը կորցրած ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» և «գ» կետերը,
- 3) «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետով.«գ) Եթե դրանք հարգելի են համարվել Ազգային ժողովի որոշմամբ»,

4) «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում 99-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1 և 3.2 մասերով.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասի «ա»-«ե» կետերով չնախատեսված հիմքերով քվեարկություններից բացակայելու դեպքում պատգամավորը քվեարկությունից առաջ կամ հետո հինգ օրվա ընթացքում բացակայության պատճառի մասին գրավոր տեղեկացնում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին:

3.2.Եթե պատգամավորը հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների կեսից ավելի բացակայել է, և այդ բացակայությունները չեն վերաբերել սույն հոդվածի 3-րդ մասի «ա»-«ե» հիմքերին, ապա աշխատակազմը հերթական նստաշրջանի ավարտից ոչ շուտ, քան հինգ օր և ոչ ուշ, քան տաս օր հետո էթիկայի հանձնաժողով է ներկայացնում տեղեկանք՝ նշելով պատգամավորի անունը, ազգանունը, հայրանունը, ընտրատարածքի համարը, հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների և դրանցից պատգամավորների սույն հոդվածի 99-րդ հոդվածի 3-րդ մասի «ա»-«ե» ենթակետերով չնախատեսված հիմքերով բացակայության քանակը՝ կցելով սույն հոդվածի 3.1-րդ մասում նախատեսված գրավոր դիմումը»:

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ «Պատգամավորի լիազորությունների դադարման կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով»: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ կետերում սահմանված է մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների կեսից ավելի անհարգելի բացակայությունների դեպքում պատգամավորի լիազորությունների դադարման կարգը, որոնց համաձայն՝ նախորդ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների կեսից ավելի անհարգելի բացակայած պատգամավորների բացակայության հարցն ընդգրկվում է հերթական նստաշրջանի առաջին չորսօրյա նիստերի օրակարգում և քննարկվում: Մեկ հերթական նստաշրջանի ընթացքում պատգամավորի քվեարկությունների կեսից ավելի բացակայելն անհարգելի համարելու մասին Ազգային ժողովն ընդունում է որոշում: Այդ որոշման հիման վրա կազմվում է պատգամավորի լիազորությունների դադարման մասին արձանագրություն, որն ստորագրում է Ազգային

ժողովի նախագահը և հնգօրյա ժամկետում ուղարկում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Սակայն ՀՀ սահմանադրական դատարանը 2013 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1081 որոշմամբ<sup>8</sup> «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի դրույթները այն մասով, որով առկա ընթացակարգերը պատգամավորի լիազորությունների **դադարում** սահմանադրական ինստիտուտը գործնականում փոխակերպում են ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ նրա լիազորությունների **դադարեցման** ինստիտուտի, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածին հակասող և անվավեր:

Խնդիրն այն է, որ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածն ամրագում է, որ պատգամավորի լիազորությունները դադարում են մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների կեսից ավելի անհարգելի բացակայությունների դեպքում, այսինքն՝ տվյալ պարագայում Սահմանադրության անմիջական գործողության պահանջով և իրավունքի ուժով դադարում են պատգամավորի լիազորությունները: Մինչդեռ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի համաձայն՝ պատգամավորի լիազորությունները դադարում են միայն Ազգային ժողովի որոշման հիման վրա: Այդ իսկ պատճառով ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ, ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի պահանջներից ելնելով, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերում պետք է իրավակարգավորման այնպիսի հնարավորություն նախատեսել, որի պայմաններում օրենքով նախատեսված իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ընդունվի ի գիտություն, և կազմվի արձանագրություն պատգամավորի լիազորություններն իրավունքի ուժով դադարելու վերաբերյալ:

Վերը առաջարկված իրավական կարգավորման պարագայում վերանում է նաև հակասությունը ՀՀ Սահմանադրության հետ, քանի որ Ազգային ժողովը ոչ թե որոշում է կայացնելու պատգամավորի լիազորությունները դադարեցնելու մասին, այլ պատգամավորի բացակայություններն անհարգելի ճանաչելու վերաբերյալ, որից հետո իրավունքի ուժով կազմվելու է արձանագրություն պատգամավորի լիազորությունները դադարեցնելու մասին, ինչն ուղղարկվելու է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Ինչ խոսք, վերոհիշյալ եզրահանգումներն ու առաջարկությունները միտված չեն համալիր լուծում տալու առանձնացված հիմնախնդիրներին, սակայն սույն հոդվածում փորձ կատարվեց ընդգծելու առավել առանցքային նշանակություն ունեցող հարցադրումները և գիտականորեն հիմնավորելու առաջարկները կյանքի կոչելու անհրաժեշտությունը:

<sup>8</sup> Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2013/pdf/sdv-1081.pdf>:

## THE DISSOLUTION OF THE AUTHORITY OF A DEPUTY OF THE NATIONAL ASSEMBLY OF RA (SOME PROBLEMS OF THE JURIDICIAL RESERVATION)

**Slavik POGHOSYAN**

*PhD Student of the Chair of Constitutional Law  
in Law Department Yerevan State University*

---

For providing a proper behavior of the deputy of the National assembly of RA and for creating guarantees to expose as a substantial public exponent who realizes the constitutional duties, it is necessary to work out functioning responsibility measues.

In juridicial respect we consider the measure designed in the article 67 of Constitution to be the most effective: it means - suspending powers of a deputy during the incoming session in case of absenteeism in more than in a half of votings disrespectfully. However, the constitutional thesis about suspension of powers of a deputy for absenteeism during the incoming session isn't being practised. It is mainly conditioned by the mentioned preconception of the paragraphs "b" and "g" of the third (3.) unit of article 99 of the Constitution of RA which is the "The Regulation of the National Assembly", which considers the absenteeism of a deputy as respectful. This thesis can give place to an enormous subjectivism, because considering the absenteeism of a deputy as respectful is left to the discretion of the Chairman of the National Assembly single-handedly.

The right to decide, if the absenteeism of a deputy in the incoming session during more than in a half of votings in cases not designed in the units "a", "a1", "a2", "d", "e" of the Act of RA, which is "The Regulation of the National Assembly", is respectful or not is appropriate to lay upon the National Assembly.